


1426



632003

2011

Բ1

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԺԱ.

№ 1351

ՅՈՒԳԱՎՅՈՒ  
ՎԵՐՁԻՆ ԳԻՏԵՐԸ

Թարգմանողին

Արքայաց քահ. Շխինեանց



Թ. Կ. Լ. Խ

Տպարան Մ. Հարածէ և Ընկ., Կիկ. 21

1898

83  
Հ-98

83

4

.36

## ՆՈՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱԿԱՆ

đU.

✓ 135

# З П Р У Г В З Р

ՎԵՐՋԻՆ ԳԻՏԵՐ

Թարգմանութիւն

## Արդարական քաղաքացիություն

202. 367-Impy L.



ԹԻԳԼԻՒՄ

Տպարան, Ա. Հարսածէ և ընկ., Դիմ., 21

1898

37655 ահ

Дозволено цензурою, Тифлисъ, 20 Мая 1898 г.



(5052)  
38

21327 - 60 թ

## ՅՈՒԴԵՅԻ ՎԵՐՃԻՆ ԳԻՂԵՐԸ

Անշարժ կանգնած էր Յուդան այնտեղ, ուր մահացու համբոյր տուեց Յիսուսին: Երկար ժամանակ նայում էր նա այն զօրքի ջռկատի ետեից, որը բարչ էր տալիս Մարդու Որդուն վէպի երուսաղէմ: Լապտերների արինաշաղախ լուսով լուսաւորուած, տէզերով և մերկացրած սրերով շրջապատած այդ տխուր թափօրը՝ գիշերային աւարառուների խմբի նման՝ լուռ և արագ անյայտացաւ ու շրացաւ մթութեան մէջ: Են ժամանակ Յուդան անվրդով փաթաթուեց իւր երկայն, կարմիր վերարկուի մէջ և երեսը գարձրած վէպի բաղար՝ սպասում էր: Կէս գիշերը անցել էր արդէն: Լուսինը իւր կապտագոյն լուսով լուսաւորում էր պտղագուրկ արտերը և նուրիբական բաղարի աշտարակներն ու ամրութիւնները: Վրդոված զարհուրելի բամբիւնի ժխորը բարձրանում էր դէսի տաճարի հրամարակը: Մնալատից լուռմ էին բուի ձայները: Օդի մէջ սաւառնող ահագին չղջիկը իւր

սառը թեով հարեց Յուլայի երեսին. Նա իւր վերարկուի բղանցքով ծածկեց գլուխը: Այդ բոլոր ժամանակ նա կարծես թէ սպասում էր մէկին: Եւ ահա յանկարծ սրտապատառ խնդութեամբ դարձաւ նա դէպի այգու մուտքը. լստուերի միջից դուրս գալով՝ շտապեց ընդ առաջել մի մարդու, որը Դէֆսեմանի խաւարի մէջ կարծես թէ որոնում էր մէկին: Դա մի ծեր հրէայ էր, երկար սպիտակ մօրուրով, կորաքամակ, որը յենուած իւր փայտի վերայ՝ անհաստատ քայլերով մօտենում էր նորան: Դա քահանայապետի գանձապահն էր: Նա սպասեց որ Յուլան մօտենայ իրան, նետեց դէպի նա կաշուէ քսակը և հեռացաւ արագ՝ քան եկել էր:

— Գարշելի շանն անգամ սովորը փաղաքելով են ձգում, — մրթմրթաց Յուլան:

Նա բարձրացրեց քսակը և ժպտաց: Քսակը ծանր էր և արծաթի զնզինքոցը ախորժելի էր թւում նորա ականցին: Յուլան դուրս վաղեց ծառաստանից և լուսնի դիմաց բացեց այն: Առաջին վայրկետնին իսկ արծաթի փայլը կարծես թէ շացրեց նորան: Վերստին սկսեց համարել դրամները. աջ ափի մէջ՝ փորձեց իւրաքանչիւրի ծանրութիւնը և երկար ժամանակ անհանդիստ նայում էր մի դրամի, որի վերայ կայսեր նկարագիրը փոքր ինչ եղծուած էր:

— Սա հանգուցեալ Օգոստոս կայսրն է, ասաց նա: Ես գերադասում եմ միւս դրամները: Տիբերիոսինը բոլորովին նոր են: Լաւ է. բահանաները կատարեցին իրանց խոստումը:

Նա քսակը պահեց գօտու մէջ և ուղղուեց դէպի երուսաղէմ: Նա իրան աշխոյժ և երջանիկ էր համարում: Եւ որպէս զի աւելի անզորը լինի իւր խիզճը, նա մտաբերում էր Կայիափայի նենզամիտ յորդորը՝ ամօթարեր սակարկութեան զիշերին: Զէ որ նա մատնեց Մովսիսին արհամարհող և Օրինաց չարաշուր վախճանը դրւակող Մարգարէին: Մատնեց իսրայէլի կեղծ թագաւորին, կեղծ Մհասիային, որը վաճառականներին արտաքսեց Սովորոնի տաճարից և մեծատունների առաջ փակեց երկնքի արքայութիւնը: Իսկ ինը՝ այն համեստ Իսկարիովտացին է, որ Աստուծոյ, Դաւթի և Հըոսիմի վոխարէն, պատուով վրէժխնդիր եղաւ, և այն օրը, երբ արեի առաջին ճառագայթները կլուսաւորեն Քրիստոսի չարչարանքը՝ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը — զետացիք, ստուկեցիք, գալիքներն ու փարիսեցիք, և կայսեր գոռոզ տեղակալ — Պիլատոսը՝ կողջագուրին և կմեծարեն իրան, իբրև մի մեծ գործ իրագործովիք:

— Իմ անունը, մտածում էր նա, — հոյն-

պէս յաւիտեան կմնալ, ինչպէս Յակովը, Դանիէլի և Եղիայի անունները:

\* \*

Եւ մտաւ խաղաղ ու մթին քաղաքը և դիմեց դեպի քահանայապետի ապարանքը, կարծելով թէ այդ ժամին Կայիափան հարցարըննելիս կլինի Յիսուսին. Հեռուից տեսաւ լուսաւորուած պատուհանները. պատշգամբների վերայ սրահակների երկարութեամբ անցուդարձ էին անում մի քանի ստուերներ. Գաւթի մէջ նկատելի էր կարմրագոյն լոյսը. փողոցը դատարկ էր: Հաւը խօսեց:

— Լուսագէմը մօտ է, — ասաց Յուղան:

Նա կանգ առաւ փողոցի գոների մօտ: Բագի մէջտեղը բորբոքում էր մի մեծ խարոյկ: Երկոտասանից մէկը՝ Պետրոսը նստած կրակի մօտ տաքայնում էր ձեռները՝ խօսակցելով մի դեռահաս տղախնի հետ: Երեսում էր, որ նա շատ փրկոված էր. Նա խօսում էր բարձր ձայնով և ասում դեռահաս տղախնին:

— Ճշմարիտը երգում եմ քեզ, որ չպիտեմ այն մարդուն:

Հաւը խօսեց երկրորդ անգամ:

Աղախինը հեռացաւ. Պետրոսը լոեց և ըն-

կլմուեց տխուր մտածմանց մէջ: Նա չնկատեց մինչև անգամ թէ՝ ինչպէս Յուղան մօտեցաւ խարոյկին: Կայիափայի ապարանքից լսում էր խոր աղմուկ, որ երբեմն ընդհատում էր խորին լուռթեամբ: Լսում էր երբեմն լուրջ և հեղաբարոյ խօսակցութիւն և երբեմն էլ այնպիսի բարկութեան և արհամարհանքի ձայներ, որոնք կսարսեցնէին և մանկան նման կստիպէին լալ՝ բագում իրան միայնակ կարծող գալիլիացի ձկնորսին: Բայց ահա հաւը խօսեց երրորդ անգամ: Պետրոսը սարսափահար ցնցեց գլուխը, սոսկալի ճիշ արձակեց և բարձրացաւ տեղից: Եւ ահա երկու առաքեալները՝ մինչ ուրացողը և միւսը՝ մատնիշ դէմառդէմ հանդիպեցին իրար: Բայց Պետրոսի դէմքը զարհուրելի էր և այնպիսի վստահութեամբ ձեռքը տարաւ դէպի իւր սուրը, որ Յուղան ահից սոսկալով նահանջեց դէպի քահանայապետի դուռը:

Նա երկար թափառեց տաճարի շուրջը, որի պարսպի դուռը արևածագին էր բացւում միայն: Ոսկէվաճառի կրամկ բանալու համար նա այժմէն իսկ կամենում էր տեղ ընտրել շինութեան ներքին սրահներում: Անկասկած քահանաները կյատկացնէին նորան մի յարմարաւոր տեղ և այնուհետեւ Եղիպտոսի, Յունաս-

տանի, Խտալիայի և Ասիայի ընտիր գրամները  
կհոսէին նորա մատների միջով։ Այն, այն ժա-  
մանակ կարհամարհէ նա բոլոր այդ թափառա-  
շրջիկներին, չքաւորութեան և զրկանաց այդ  
սիրահարներին, իւր նախկին ազատ ընկերա-  
կիցներին — այն Մարդու աշակերտներին, Որին  
վիճակուած էր մեռնել։

Քանի մի զետացի, բարունու հսկողու-  
թեամբ բացին տաճարի վանդակապատները:  
Իւր սեպհական տունը մտնող մարդու վստահ  
բայլերով Յուղան մօտեցաւ նոցա ժպտալով և  
ձեռների սիրալիր շարժուածրով։ Բայց բահա-  
նան յօնքերը կիտած մեկնեց ձեռը և արգիլեց  
նորա ճանապարհը.

— Կաց և հեռացիր այստեղից։ Օրէնքը  
արգելում է պիղծ արարածներին մտնել նուի.  
բական նախագաւիթը չեռացիր. երեսուն ար-  
ծաթ, արեան վարձը յանձնեցին քեզ այս գի-  
շեր. բո աշխատանիրը վարձատրուած է արդէն։  
չեռացիր ասում եմ, եթէ ոչ ինքս կարտար-  
սեմ քեզ իրեւ չնացողի, կռապաշտի և մար-  
դասսպանի։

\* \* \*

Յուղան հեռացաւ տաճարից։ Այս անզամ

ուղղուեց նա դէպի Պիղատոսի ատեանը։ Հը-  
ռովմայեցիք աւելի մեղմաբար կվարուեն ինձ  
հետ, քան քահաները, մտածում էր նա։  
Նորա մինչի անզամ կպաշտպանեն ինձ սինա-  
գողի գէմ։ Բաբբիները կրօնամուներ են, ես  
խղճում եմ նոցա։ Ես գիտեմ, որ ինչպէս Մով-  
սիսի ժամանակները, այնպէս էլ այժմ Ղերի  
ցեղը իւր հոգու խորրում գեռ շարունակ եր-  
կրպագում է Ոսկէ հորթին։ Բայց երբ նորա  
կտեսնեն թէ ինչպէս փոխարքայի պաշտպա-  
նած իսկարիովտացին կայսեր չնորհներով պա-  
գեատըրուած ահագին հարստութիւն կգիղէ, կը-  
լցնէ իւր կրպակները ոսկեայ և մետարսեայ  
գործուածներով, փղոսկրով, թանկապին ալինե-  
գէններով, ասիական անուշահոտութիւններով  
և այդ բոլոր ապրանքները թանկ զնով կրկնա-  
վածառ կանէ չոռմի վերայ, այն, այն ժամա-  
նակ նորա կմիծարեն և կըողպորթին ինձ և  
ամեն օր կծխեն ոտներիս տակ իրանց Եհովա-  
յից յափշտակած խունկը։

Եւ այդպէս, ուրախացած իւր գոռող և  
անյագ մտադրութիւններով Յուղան ամբողջ  
ճանապարհի երկարութեամբ կարծես թէ իւր  
հայեացը պատասխանում էր սինազոգի ան-  
դամների — դպիրների և փարիսեցիների արհա-  
մարհական հետարբրութեան, որոնք հեռուից

մատներով էին ցոյց տալիս նորան, իսկ ի մօտոյ զգուանքով փախուստ էին տալիս նորաստուերից, իբրև մի զազրալի էակից։ Մեծարանակ ամբոխի ապմուկից հրասուրուած նաշտապեցրեց քայլերը և յանկարծ փողոցի շըրջադարձի մօտ հանդիպեց մի զարհուրելի տեսարանի։ Սանձարձակ ամբոխը բազիսում էր Պիղատոսի պալատի պարիսպները։ Երուսաղէմի և չրէստանի խուժանը — գողեր, պատուակոյս կանայք, ուխտադրուժներ, դրամանենգներ, լեռնային որչերից իշած աւագակներ, աւագականոցներից դուրս պրծած մարդասպաններ և մահապարտներ, սորա ամենքը աշխները արիւն կոխած կարկառում էին ձեռները գէպի հիւպատոսը և աղաղակում։

— Բարաբրային, Բարաբրային, տուր մեզ Բարաբրային։

Պիղատոսը շրջապատած իւր խմբով և խախամապետներով՝ զլխաբաց կանգնած էր ծանը պորփիւրի սիւներից շինած սրահի մէջ։ Նա հագած ունէր սպիտակ վեցարկու և ամբոխին առաջարկում էր զանազան բառեր, սրոնց Յուղան պարզ չէր լսում։ Եւ ամեն անգամ հէնց որ չռովմայեցի իշխանը բացում էր բերանը՝ խաժամուժ ամբոխի աղաղակները սաստկանում էին։

— Բարաբրային, Բարաբրային... Յուղան ևս միացաւ ամբոխին։ Այնտեղ նահանդիպեց այնպիսի ընկերների, որոնք ողջունում էին նորան, պէսպէս մարդասպաններ և անպարկեշտ կանայք մեծարում էին նորան։ Եւ երբ անցաւ ամբոխի առաջին կարգերը՝ նոյն իսկ ապարանքի շէմքի մօտ, նա զգաց որպէս թէ ընդհանուր շարիքի սարսափելի փոթորիկը ամեն կողմից շրջապատում և զրկում է իրան։ Հազարաւոր կրծքերից միմիայն մի զարհուրելի աղաղակ էր լսում։

— Խաչիր Դորան, խաչիր Դորան։

Պիղատոսը տխուր և այլալուած մտաւ իւր ապարանքը։ Նորան հետեց իւր շքախումբը։ Մրահի մէջ մ'նաց միայն մի երիտասարդ հարիւրապետ, որը կանգնած երկու սիւների մէջ զիտում էր ամբոխին։ Նորա դիմաց վեհանձն շարժուածքով մի ծերունի օրէնսգէտ տենդային արագութեամբ թերթում և մի տեսակ տարօրինակ վրդովմամբ ընթեռնում էր մեծ Մարգարէների զիրը։ Ամբոխի բարկութիւնը հետղհետէ մեղմանում էր։ Նա վրկոված զգում էր, որ ապարանքի ներսը՝ կատարւում էր մի մոայլ զործ։ Յանկարծ քահանան նկատեց կարմիր վերարկու հազած առաքեալին և մի բանի բառ շշնչաց հարիւրապետի ական-

զին, որ մի խիստ արհամարհական հայեացը ձգելով իսկարիստացու վերայ՝ իսկայն հեռացաւ այնտեղից։

Ահա գանդաղ և հանդիսաւոր կերպով բացուեցան արայրապատ ծանր գռները և Պիպատոսը կրկին երկաց պօրփիւրեալ սիւնաշարի մէջ. փողոցում տիրեց մեռելային լուռւթիւն։ Նախագաւթի կիսամթութեան միջից տատանուելով երկու զինուորի օգնութեամբ երկաց Յիսուս՝ երեսը ծածկուած արհան արցունքներով. փշեայ պսակը զլիսին և եղէզը ձեռին, բղամիդ ծիրանին վերան ծածկած, որի ծայրերը ամրացրած էին կրծքի մօտ։ Նա գալիս էր ներկայանալու Աստուծոյ ընտրած ժողովրդին։ Հուռ ամբոխը ապշած նայում էր այդ մօտեցող արինաշակախ տեսարանին։ Յուդան սարսափած դարձրեց երեսը։ Պիղատոսը զլուխը խոնարհեց։ Նորա ձեռի վերայ փայլում էր այն մտատնին, որը ծառայում էր իբրև կնիք կայսերական հրամանների։ Նա մատնացաց անելով նաղովրեցու վերայ՝ ուժգին ձայնով ասաց։

— Ահա նա։

Իսկոյն նորից թնդացին խառնիճաղանճ ամբոխի սոսկալի ձայներն ևս առաւել կատագած և հրամայաբար։

— Խաչիր Դորան, խաչիր Դորան։

Ներկայ եղող կանանցից մի քանիսը հեծկլում էին, իսկ մէկ այսահար Տիբերիոսի արձանը գրկած գոռում էր.

— Վայ նորան, վայ Երուսաղէմին, վայ Աստծուն, վայ և ինձ։

Փոխ հիւպատոսի պահապանների գլխաւոր հարիւրապետը իւր հաստաբուն տէղով կոպտութեամբ ցրուելով ամբոխը մաքրում էր այդ տխուր թափօրի ճանապարհը։ Յուդան Յիսուսի հայեացը խուսափելու համար՝ ծածկուեց իւր մօտ եղողների ետև, բայց Պիղատոսի զինուորներից մէկը սրով զարկեց նրան և առաց.

— Դու ինչնև եկար այստեղ, չըէից Մարգարէի չարչարանիքները ծաղրելու, թէ քո ներկայութեամբ Հուովմի վեհութիւնը անպատուելու։ Մեր աստուածները ատում են մատնիչներին։ Հեռացիր այստեղից և մի ուրիշ առանձնացած ապաստանարան որմնիր քո նախատինը ծածկելու համար։

\* \* \*

Յուդան նոյնպէս զնում էր այն ամբոխի հետ, որոնք շրջապատել էին հռովմայեցոց զինուորներին։ Նոցանից շատերը, որոնք մի փոքր առաջ Բարաբային էին պահանջում՝ հաս-

կացան հարիւրապետի խօսքերը։ Յուդան իսկոյն ըմբռնեց ատելութեամբ ներչնչուած շըշուկը և ծաղրական նկատողութիւնները. զգուշութեամբ գանդաղեցրեց քայլերը և շեղուեց դէպի անապատը տանող ճանապարհի։

— Միթէ ամենկը նայում են ինձ վերայ իբրև ժանտախտով վարակուածի, մտածեց նա ինքն իրան։

Նա վճռեց վերադառնալ տուն և այնտեղ հանգիստ կերպով մտածել ներկայի և ապագայի վերայ։ Բայց պատահմամբ հանդիպեց նա մի խումբ կանանց և երեխաների, որոնց հայեացքից սարսափեց բոլորովին։ Նա ճանաչեց այն երեխաներին, որոնք երեք օր առաջ, երբ Յիսուս հանդիսաւոր մտնում էր Երուսաղէմ, կանաչ ոստեր և ծագիկներ էին ձգում ճանապարհին և երգում։

— Ովսաննա, որդւոյ Թաւթի, ողորմիր մեզ, Ովսաննա։

Նա իւր ուղղութիւնը փոխելով անցաւ դէպի քաղաքի ամբութիւնները, սակայն երեխայք հետեւում էին նորան նղովելով։ Նա շտապեցրեց քայլերը, որովհետև զգում էր, որ երեխայք սպառնում են իրան։

Անցաւ դէպի շուկայի հրապարակը, որ

խոնուած էին այդ առաւօտ Թալիլիայի գիւղերից եկած գիւղացիք և հովիւներ։

— Յուդան, Յուդան, աղաղակում էին երեխայր։

— Յուդան, Յուդան, զոչում էին զալիլիացիք։

— Սպանեցէր, սպանեցէր գորան։

Ժողովելով վերարկուի ծալքերը նա զըլիսակոր սկսեց փախչել քարէ կարկուտի տարափի տակ։ Նորան հետեւում էին չներով։ Նա զգում էր, որպէս թէ երկիրը փախչում է իւր ոտների տակ։ Վախենում էր, թէ մի զուցէ յափշտակին իւր երեսուն արծաթը և սարսափելի մահուամբ էլ իրան մեռցնեն։ Նա արդէն կանգնած էր Երուսաղէմի լայն բացուած դրոների մօտ. բուռն յուսահատութեան ներքոյ ընկաւ նորա կամարների տակ։ Հոռվմայեցի զինուորները ենթագրելով, թէ մի զուցէ խոռվարը ամբոխը վազում է դէպի Գողգոթա՝ գահիճների ձեռքից կորզելու չըէից արքային, ուղղեցին իրանց տէզերը դէպի այդ ամբոխը և արգելեցին նրանց։ Իսկ Յուդան սկսաւ վագել լուսաւորուած դաշտի միջով, քարքարոտ հովիտներով, հեղեղատների ձորուղիներով, մերկ ըլլակների զլխով։ Նա վազում էր ինչպէս որ պատահում էր, մէկ դէպի սարերը, մէկ դէպի

ծովը. կամ դէպի Տիբերական ծովը և կամ դէպի Մամարիա քաղաքը. դէպի Բէթդէհէմ և կամ դէպի Սողոմ: Մի միտք, մի սարսափելի միտք պաշարել էր նորան, որ ինքը կորած է: Նորան՝ Կայսեր և Մովսիսի այդ հաւատարիմ ծառային հալածում էին իսրե կատաղած գաղանի: Ուր կարող էր արդեօք գտնել մի այնպիսի անվտանգ պատսպարան, որտեղ այսօր, վաղը և ընդ միշտ կարողանար թագչել:

Միջօրէի մօտ էր, երբ նոտեց մի քառաժայռի ստուերի տակ և առանձին բաւականութեամբ նկատեց, որ չնայելով երկար թափառելուն՝ իրանից միայն մի քանի քայլ հեռու էին կանգնած երտսաղէմի չարազուշակ պարիսպները: Ապա տեսաւ նոյն իսկ քաղաքի մօտ բլրի գագաթին հոռվմայեցի հեծելազօրների մի ջոկատ, իսկ աւելի հեռու երկում էին մարդկանց, կանանց և երեխաների սկազգեաց խըմբեր, և վերջապէս ժողովրդի մեծ բազմութիւն: Այդ մի տարօդինակ և մթին տեսարան էր, որին նայում էր նա համարեա թէ անդիտակցօրէն: Բայց ահա այնտեղ, հոռվմայեցւոց տէ. դերից և սաղաւարտներից աւելի հեռու՝ կապոյտ երկնակամարի տակ՝ բարձրանում էր երեք խաչափայտ, որոնց իւրաքանչիւրի վերայ ձեռները և ոտները բենուած կախուած էին մի

մի մարդ: Յուղան ճանաշեց, որ այդ Գողգոթան է: Խաչափայտերից ամենաբարձրի վերայ վշեայ պսակով պսակուած գլուխը թերած մեռանում էր Քրիստոս: Եւ երբ հոռվմայեցւոց հեծելազունդը վերադառնում էր դէպի երուսաղէմ, հրէից արքայի ոտների տակ՝ մատնիշը նկատեց մի ծնկաչոր կին, իսկ խաչի շուրջը երեսնիվայր գետին տարածուած աշակերտներին և երեխաներին: Այդ տեսարանը սակաւիկ մի մեղմացրեց նորա տանջանկները և քաջալերեց նորան, Պիղատոսը իւր փոխարէն վրէժինդիր եղաւ: Նո մտաբերեց, որ շատ մարգարէներ նորանից տւելի են ենթարկուել հալածանաց, նախատանաց և անզթութեանց՝ ժողովրդի, բահանակների և իշխանութեան կողմից: Նոցանից ոմանք դէպի Աստուծոյ գործը ունեցած իրանց ջերմեռանդութեան համար՝ մինչեւ անզամ վկայել են արեամբ: Իսկ ինքը, թէպէտ հիեռունայ չըէաստանից խիստ անպատուած, բայց գոնէ բսակը լցրած: Նրանց չի յաջողիլ իրան ևս եսայի մարգարէի նման երկու տախտակի մէջ սղոցեր: Եւ երեսը դարձ ներս ապերախտ սինազոգից՝ ուզոց բայլերը դէպի Յուլպէ: Բայց յանկարծ բլուրների և հովիտների մէջ, երկներում մի դարհուրելի փոթորիկ բարձրացաւ, արել մթնեց և կարծես թէ



լսաւարեց բոլորովին և մի սկ ամպ իջաւ Ե.  
բուսաղէմի վրայ։ Խսկարիսսվացուց մի քանի  
քայլ հեռաւորութեան վերայ՝ կայծակը փշրեց  
ահազին ժայռը. իսկ այնտեղ հեռուում կայծա-  
կի ծիրանագոյն լուսով լուսաւորուած կարծես  
բուսել և տատանւում էին երեք խաչափայտե-  
րը. Խաչեալները ևս տարածելով իրանց ա-  
րինաշաղախ ձեռները դէպի առաջ, թւում էր  
թէ մօտենում էին մատնիշին։

Յուղան ահից խելազարուած ընկաւ գետին  
և ծածկուեց իւր վերարկուի մէջ։

\* \* \*

Նա երեկոյեան միայն բարձրացաւ տեղից,  
Տիեզերի մէջ տիրում էր մեռելային լուսթիւն։  
Նա այլ ևս չէր համարձակուում նայել դէպի  
Դողգոթա։ Բնաւթեան սոսկալի լուսթիւնը ա-  
հաբեկեց նորան։ Նա ցանկանում էր հանդիպել  
մի որեէ մարդու, մարդկային ձայն լսել՝ կա-  
րեկցութեան նշոյլ նկատել մարդկային դէմքի  
վերայ։ Նա վերագարձաւ կրկին երուսաղէմ և  
տանջած ու յոգնած նստեց ճանապարհին։ Կա-  
պոյտ երկնակամարի վերայ չուտով փայլեցին  
աստղերը և կապտագոյն մառախուղի շղարշի  
միջից՝ լուսինը ախրաղէմ լուսով լուսաւորեց

դաշտավայրը։ Դէպի քաղաք տանող ճանապար-  
հի վերայ խիճերի մէջ լսուեցին գաւազանի  
հարուածներ և յանկարծ մի ստուեր նկատուեց։  
Մի մարդ կորացած դէպի առաջ՝ զալիս էր  
այնպէս արագ, որ կարծես թէ փախչում էր  
անէծքից։ Անապատի աղօտ լուսի մէջ երեսում  
էր ինչպէս նա իւր ձեռքի գաւազանով ահազին  
շարժումներ էր անում, որով յայտնի կացու-  
ցանում էր իւր յուսահատ վճռականութիւնը։  
Ճանապարհորդը առանց կանգ առնելու անցաւ  
Յուղայի մօտով։

— Ագասփիր, գոշեց առաքեալը, Աղաս-  
ֆիր...

Անցաւորը ոչինչ չպատասխանեց, այլ ա-  
ւելի ևս արագացրեց իւր բայլերը։ Յուղան ա-  
զերսելով վազեց նորա ետեից։ — Ագասփիր,  
թնդ ես էլ հետեւմ բեզ։ Ուր որ զու երթաս,  
ես էլ կլամ. ուր որ զու հանգստանաս, այն  
տեղ էլ ես կհանգստանամ։ Ես քո ծառան կը  
դառնամ, քո սարուկը, քո հաւատարիմ շու-  
նը. Մի թողնիր ինձ միայնակ այս գիշերա-  
յին մթութեան մէջ։

— Ես շատ հեռու պիտի զնամ. Ասորես.  
տան, Եղիստոս, Ասիայի խորքերը, աշխարհի  
ծայրը. գնում եմ չուզմ։ Ես երբէք հանգստա-  
նալու և քնելու չեմ։ Ես չկարեկցեցի Յիսուսին

և իմ անգիտութիւնս քաւելու համար՝ յաւիտեան աննպատակ և անյոյս պիտի թափառեմ։ Բայց իմ վերայ չկայ Այդ արդարի արիւնը։ և ես քեզ զգուշացնում եմ, ով Յուղա. որ ոտներիս տակ պիտի ջախջախիւմ ինձ ճանապարհիս պատահող ամեն մի իժի։

Թափառականը անյայտացաւ խաւարի մէջ։ Յուղան տեսաւ, որ ինչպէս յաւիտեան—արսորեալի ստուերը անյայտացաւ. նա երկար ժամանակ լսում էր երկաթեայ գաւազանի սակաւ առ սակաւ թուղացող հարուածները։ Նա վախենալով նորից մօտեցաւ Երուսաղէմին. նա գիտէր, որ քաղաքի պարիսպներին կից՝ ձորում կային մի քանի հիւղեր, որտեղ յանցաւորներն և արսորուած թշուառներն էին ապաստանում։ Գուցէ, այդ լարձիթներից մէկի մէջ յաջողի նորան գտնել մի ընկեր և մի օթևան՝ մինչև արկի ծագելը։

\* \*

Հիւղերից մէկի գաան ճեղքից լոյս էր երեսում. Յուղան ներս նայեց այդ ճեղքից և տեսաւ, որ լապտերի առաջ մի մարդ է նըստած։ Նա ճանաչեց այդ մարդուն. — զա ամբողջ Հրէաստանը սարսափեցնող յայտնի եղեռ-

նազործ Բարաբրան էր. զա այն աւազակն էր. որին Պիլատոսը յանձնեց հրէից ժողովրդին։ Յուղան բաղխեց և զուը բացուեցաւ։

— Միրելի Բարաբրան. ես յոգնած եմ և սոված, ես սարսափի մէջ եմ. աղաչում եմ, թոյլ տնար ինձ այս գիշեր քո յարկի տակ մնալ։

Աւազակը, որ կանգնած էր իւր խրճիթի դրան մէջ՝ ուսերը շարժեց և չարախնդաց դէմքով պատասխանեց։

— Հըմ, զու ուզում ես անպատուել Բարաբրային... եթէ ես քեզ հիւր ընդունեմ իմ մօտ, վաղը ժողովուրդը կրարկութէ ինձ Երուսաղէմի մէջ։ Ո՞չ Լսիր, Յուղա, ես սպանել եմ հինգ կամ վեց հրէայ և երկու հոռվմայեցի հեծելազօր. տաճարի մէջ րահանայապետի սընդուներից ես շատ ոսկիներ եմ զողացել. գրջել-պոկել եմ անզամ Պատգամաց Խորանի ոսկեայ շերտը, որին մօտենալը մահ է սպանում, բայց մատնութիւն՝ ես երբէք չեմ արած. գահիճներին զոհ ես երբէք չեմ մատակարարել։ Աւելի շուտ ես այս մատներովս կըխեղպեմ քեզ՝ բան թոյլ կտամ, որ անցնես բնակարանիս շէմը։ Եթէ քունը յաղթել է քեզ՝ վնա Գողգոթա—այստեղից հեռու չէ, զու այնտեղ՝ զլուխտ քո Տիրոջ խաչին յենած՝ հանգիստ կարող ես քնիլ, և ոչ որ, մինչև ինքը սատա-

նան անգամ չի համարձակուի այստեղ այս պի-  
շեր բեղ անհանգստացնել...

Յուղան նորից սկսեց բարչ դալ այս և  
այն կողմը. նա երբեմն ծածկում էր ամրոցի  
պարսպի տակ, երբեմն խաղողի որթերի և  
ձիթենիների անտառների մէջ. Բարարբարի  
հասցրած վիրաւորանքը նորա համար շատ  
ծանր հարուած էր: Յիշուսի Աստուածը մինչև  
ցայժմ ազնիւ թշնամիներ հանում էր նորա  
դէմ. ինչպէս օր. Տաճարը, չոռվմը, աշակերտ-  
ներին, ժողովրդին, նզովեալ չրէաստանը, իւր  
մօտից անցնող Ալասֆիրը և այն և այն. այդ  
ամենն էլ գեռ տանելի էին. բայց այդ մար-  
դասպան—աւագակը, որ վանդեց նորան իւր  
բնակարանից... այդ վիրաւորանքը չափազանց  
խիստ էր և զէնքը կարի անորդ: Նորա ատե-  
լութիւնը դէպի նազովրեցին հասաւ հրէշային  
մեծութեան. այդ բոլոր անարգանքի միակ  
պատճառը՝ Խաչեալն է: Յուղան ուրախ էր,  
որ մատնեց նորան. նա խորամանկ ժպիտով  
մտարերում էր այն չարչարանիները, որոց ին-  
քը վկայ էր եղել. մտրակների հարուածները,  
Պիզատոսի ծառաների ապտակները, պսակի  
փշերը և խաչի բեեռները, այդ բոլորը միան-  
գամայն պատկերանում էին նորա յիշողու-  
թեան մէջ:

Եւ ահա այդ վայրկեանին միայն մտարե-  
րեց, որ աշխարհի այդ հաղուաղիւտ Մարտի-  
րոսը ամենաչնչին գնով է յանձնուած սինա-  
գոգի ճանկը:

— Առ նուազը 100 դենար արժէր նա,—  
մրժմրժաց Յուղան. անովսրմ կերպով խարե-  
ցին ինձ քահանաները: Նա բռունցքով սպառ-  
նաց աստղագարդ երկներին:

Նորան տանջում էր ծարաւը և ջերմը,  
վասն որոյ մօտեցաւ մի ծառաստանի այն յու-  
սով, որպէս զի նորա հովանու տակ գուցէ գտնէ  
մի աղբիւր: Տերեների մէջ մեղմիկ և հանդարտ  
փշում էր բամին: Յուղան այստեղ զգաց մի  
թեթե սփոփանք: Յանկարծ նա մի վայրենի  
ճիշ արձակեց և ընկաւ ծնկների վերայ, կար-  
ծես մի աներեոյթ ձեռք հարուածեց նորան: Նա  
ճանաչեց թղենին, այն թղենին, որի տակ  
վերջին վիշերը՝ սպառաղինուած զինուորների  
ներկայութեամբ նա մահացու համբոյր տուեց  
Մարգու Շնրգուն: Նա ծնկաչոր դուրս սովաց  
Գէթսեմանի պարտէղից և ապա սայթաքելով  
ոկտեց թափառել անապատի մէջ: Այլև ոչ մի  
բանի վերայ չէր մտածում նա, ոչնչից յոյս չու-  
նէր: Նորա ցանկութիւնն էր միմիայն տեսնել  
անկեալ հրեշտակին՝ սատանային և իւր անրաւ-  
լուսահատութեամբ շարժել նորա դութը:

Նորանից հեռու երկու արմաւենի իրանց  
բարակ ճիւղերը տարածել էին մի ջրամբարի  
վերայ, որը համարեա թէ չէր երեսում դաշ-  
տերի մէջ։ Դա Յակովի ջրհորն էր, որի նուի-  
րական ջուրը Յիսուս մի խօսքով սրբագրուեց։  
Յաւգան երբէք չէր կարող մոռանալ այդ սրան։  
Հելի յիշատակը։ Նա գժուարութեամբ խոնար-  
հեց գէպի ջրհորի շուրթը։ Ճղթայի վերայ դոյլ  
կախած չէր։ Նա թեքուեց եղբին, որպէս զի  
իւր բորբոքուած երեսը ջրի պազութեամբ դո-  
վացնէ։

\* \* \*

Արմաւենիների միջից ինչպէս թեթի ու-  
րուական՝ սլացաւ մի մատաղահաս, սպիտակա-  
զգեստ, ընկոյշ և նազելի ապչիկ, որը զլսին  
կապած ունէր մի թափանցիկ սպիտակ շղարշ։  
Նա իւր մերի ձեռով աջ ուսի վերայ բռնած  
ունէր մի կաւէ անօթ։ Յուղան բարձրացրեց  
իւր այրուող երեսը և հաղիւ լսելի ձայնով ար-  
տասանեց։

— Ծարաւի եմ...

Մատաղահաս աղջիկը դողդողաց ահից.  
Նա կարծես թէ մի վտանգաւոր գաղան տեսաւ  
իւր դէմ կանգնած։

— Ծարաւի եմ, կրկնեց Յուղան։  
— Նա ևս նոյնպէս, ասաց աղջիկը, այն  
Մարգարէն, որին գու մատնեցիր, նոյնպէս  
ձայնեց խաչի վերայից՝ «ծարաւի եմ». իսկ  
հովվայիցիր տէզի ծայրով բացախի մէջ թա-  
թախած սպունգ մատուցին նորան։

Աղջիկը ընկզմեց անօթը ջրամբարի մէջ և հա-  
նեց մարուր ջրով լցրած, որի գետին թափուող  
կաթիները նմանում էին անզին ակունքների։

Յուղան լուռ էր, նա գողգողում էր մանկան  
ներկայութիւնից։ Փափաքում էր այդ ցուրտ ջրի  
մէջ սուզել իւր տոշորուած շրթունքները։

Աղջիկը հրաշալի էր իւր այդ լսիկ տրտմու-  
թեան մէջ։ Նա թեքուեց գէպի Յուղան և ասաց.

— Առ խմիր, յանուն Յիսուսի սիրոյ։

Երբ Յուղան խմեց ջուրը՝ աղջիկը կրկնեն  
դրաւ անօթն իւր աջ ուսին և աստղերի քըն-  
քոյշ լուսով լուսաւորուած՝ անհետացաւ։ Այդ  
վայրկենին Յուղայի խաւարամած հոգու մէջ  
կարծես թէ թափանցեց լուսոյ նշոյլը։ Սուր  
հայեացըով իսկոյն չափեց նա իւր անկման և  
շարագործութեան խորխորատը։ Այդ մի անա-  
կնկալ և մահացուցիչ ցնցումն էր նորա զղջ-  
ման համար։ Մատաղահաս աղջկայ հեզութիւնը  
բացեց նորա համար այն գաղտնիքը, որին նա  
երբէք չէր հաւատացել և երբ մտածում էր թէ

ինքը վիրաւորել է Աստուծուն, սարսափով լըց-  
ւում էր նորա սիրտը:

— Ո՞վ է այդ խաչեալը, ասաց նա, որ մա-  
տաղահաս մանկան ձեռքով լցրեց իմ հոգու  
մէջ զթութեան բալասանը.

Երկար նստեց նա Յակովի զրհորի մօտ:  
Հնայելով, որ նա միշտ միևնոյն բանն էր մտա-  
ծում, այնուամենայնիւ այդ մտածմունքը չէր  
սփոփում, այլ ընդհակառակը անսահման վիշտ  
էր պատճառում նորան: Ուզիվ նորա հանդէպ  
փոքրէկ բրակի վերայ՝ կանգնած էր թղենին.  
Յուդան յիշեց Տիրոջ առակը:

Յանկարծ վազեց նա գէպի ծառը. գետին  
ձգեց իւր կարմիր վերարկուն, թափեց նորա  
վերայ 30 արծաթը և բակելով իւր ասպարօշի  
կապերը՝ կախուեց անպտուղ թղենու ամենա-  
հաստ ճիւղից:

Ինքնասպան առաքեալի ոտների տակ կար-  
միր վերարկուն նմանում էր արեան բծի: Նորա  
վերայ պարկեց շնապայլը և քնեց մինչև արշա-  
լուսի ծագելը. իսկ երբ այդ եղաւ՝ ահապին  
գիշակեր անգղը սաւառնելով օդի մէջ իւր  
կարմրագոյն թևերով շրջաններ էր գծում շա-  
րագուշակ ծառի վերայ:



## ՆՈՐ ՄԱՏԵՆԱԴԻՐԸՆ

---

1. Խոռվակ, պատմական վեպիկ. Քամալեանց Ա. 1894. . . . . — 25
2. Ֆէրիզադէի երգը, Փոքր Ասիայի կեանքից, թարգմ. Յ. Լալայեանց 1894 . . . — 25
3. Ղարիբ Մշեցի. պատկ. տաճկահայ. ներկայ կեանքից 1894 . . . . . — 10
4. Հուքսէյ. Տարերք բնական գիտութեանց. ժողովրդ. ընթերցանութեան համար գերմ. թարգ. Իս. Յարութիւնեանց 1894 . . . — 40
5. Վահան Մամիկոնեան. Ճաղարբէդ. Յ. 1894 — 40
6. Ալպեան հովիւ, գերմ. թ. Իս. Յարութիւնեանց 1895 . . . . . — 20
7. Հայրենազորկ, գերմ. թարգմ. Իս. Յարութիւնեանց 1896 . . . . . — 50
8. Գիւղական վարժուչի, Զիահազօղիի, թարգմ.
1. Մերիք Աղամեանի 1897 . . . . . — 25
9. Հոփման. Զինուոր Յակոբ, գերմ. թ. Տիր. Կոստանեան 1897 . . . . . — 7
10. „ Կեանքի գպրոց, գերմ. թարգ. Տիր. Կոստանեանց 1897 . . . . . — 10
11. Յուղայի վերջին գիշերը. թարգմ. Աբր. բահ. Շխինեանց. 1898 . . . . . — 7



1426

2013

